

# ԸՆԴ ՀԱՅԱՍՏԱՆ ՈՌԻՍԻՈՅ

(ՏԵՍ ՀԱՏ. ԽԹ յ'էջ 285)



Գ:

ԵՐԱՍԽ շոգեմտան ժամանելը: — Մեկնումն ի Նորաշեն: —  
Կոչր գետին վրայ ձանապարհորդոչիւն: — Արար—Համի  
—Գատուրի գիւղը: — Մեր նաապետն Պապա Հիսեյիս  
օղոս: — Ժամանումն ի Ճեկատ:

2 Մայիս. Չմեզ տանող պզտի շոգեմտան՝ հասաւ այս գիշեր, ու կը  
ջերմացընէ զկաթնայն:

Նորաշենի որսարանին տեարց հիւրասէր վերջին ճաշը վայելելնէս ետքը,  
որոց յիշատակը անմտաց պիտի մնայ ի սիրտս մեր, կ'ելլենք յէրասխ, ի  
գեղեցիկ և յարդարեալ շոգեմտան փոքրիկ: Օղոյն կարգէ գուրս ջերմութեանն  
համար իսկոյն չորս կողմէն հանգիստ բազմոցներով կահաւորեալ աշակող-  
մեան սրահը կը մտնենք:

Էրասխ՝ մեծ նաւ մը կը քաշէր, ծանրաբեռնեալ ձկանց որոց կարեօր նիւ-  
թերով, և շատ նաւակներ: Նաւաստիք բոլորն ալ Գաղք էին կամ Պարսկիք:  
Գարալը— Գազպինլի կոչուած գիւղին զիմաց քիչ մը կանկ կ'առնունք, եր-  
կորոզ նաւապետն ընդունելու, որ բաւական ատեն սպասել տուաւ մեզ: Նոյն  
պահուն ժողովուրդը խուսն կը գիմէ յափունս ի տես շոգեմտուն և անոր ըսպի-  
տակախոյր տեարցը:

Ամենուն, ինչուան նաև աղայոց երեսին վրայ ծաղիկ հիւանդութեան  
հետքն կ'երևնան. և շատեր՝ կարծես թէ զեռ նոր վարակուած են անով:  
Այս կողմի ժողովրդոց մեծ հարուած մը, որ զեռ եւս յանձնառու եղած  
չեն պատուաստի դարմանն ընդունիլ: Վերջապէս կը հասնի նաւապետն, մենք  
ալ ճամբայ կ'ելլենք զէպ ի Մալխան յառաջ երթալու: Էս թէպէտ բուն են յը-  
ձանք և ջուրն այլեկած, բայց մեր առասկան գոյներով շոգեմտաւ՝ ուրախ զը-  
ւարթ կը կտրէ կ'անցնի:

Նաւուն տախտակամածին վրայ նստած կ'առնունք թէյը, ժամը չորսին, մինչ  
զիմացնէս հետզհետէ կ'անցնին կուր գետին միահարթ ափունքը, բարգաւանք  
բուսաբերութեամբ ի կորնթարզ կողմանս, անբերք ի գոգաձևան, և որոց եր-  
կայնութեամբ հոս հոն կը տեսնուին քանի մի աղքատին հիւղք:

Պզտի նաւակներն զորս մեր շոգեմտաւ կը քաշէ կը տանի, լեցուելով բոլորովին  
ջրոյն տակ կ'անհետանան: Հարկ է կենալ կանկ առնուլ, ջուրը պարպելու  
համար:

Կէսօրուան մօտ կը հանդիպինք պետական շոգենաւուն, որ կը հսկէ ձնոր-  
սարանաց վրայ, և շուտով մեզմէ յառաջ կ'անցնի: Երկու շոգենաւք միանգա-  
մայն կուր գետոյն վրայ, որ անտօլոր տեսարան մ'է: Երասիւ ծանրաբեռն,  
չի կրնար արագութեամբը մրցիլ, և իր առաջնութիւնը գրասելու ուստի նաւապետը  
առաջատարներ բանալ կու տայ՝ ընթացքը փութացնելու համար:

Անթիւ անհամար կրիայք թումբերուն վրայ կը քայլեն: Կ'անցնինք Արաբ-  
Քարի — Գանչու կոչուած գիւղին առջեւէն:

Կարգէ դուրս ոլորտապտոյտ և ծուռամուռ ընթացք ունեցող գետ մ'է  
կուր. անընչօր կը յաջորդեն միմեանց իր շրջաններն, ու իբարու վրայ դար-  
ձադարձի միւսանգամ կը բերեն զքեզ հոն ուստի կարծէիր շատ յառաջ մեկ-  
նած ըլլալ. միշտ նման տեսարաններ ու ձանձրայի միակերպութիւն մը պիմա-  
ցըզ գնելով:

Թումբերուն երկայնութեամբ ամէն վայրկեան կը տեսնես սկզբնական ջր-  
հան մեքենաներ, որ դաշտերու ոռոգման համար գետէն ջուր կը հանեն: Կու-  
րէն գատ բնակիչք խմելու ջուր չունենալով, և որ յաճախ տղամտառն է, մեծ  
սափորներու մէջ կը պահեն, ուր կը գտուի կը մաքրուի, և արեգակնայն ճառ-  
ղայթից տաքութեանէն պահպանելու համար՝ վրան եղէգնելով կը ծածկեն:

Այլեայլ ձկնորսարանաց հանդիպելով ճամբուն վրայ, գեղեցիկ արևմուտքով  
մը որ քանի մը վայրկեան երկից երեսը կենդանի կարմրութեամբ կը փայլե-  
ցընէ, կանկ կ'առնու շոգենաւը Սալիանի դիմաց, ոչ հետի ի պատիւ ամուսնու-  
թեան մը պայծառապէս լուսաւորուած տնէ մը: Նաւէն մեր մաղթանքը կ'ուզ-  
դենք առ նոր ամուսինս. և պատասխանը կ'ընդունինք ուժով և զօրաւոր ձայնով  
մը թէ «Աստուած պահպան» (Ալլահ սաքլասըն):

Նոյն միջոցին նաւաստիք տախտակամածին վրայ իրենց ազօթքն ու լուաց-  
մունք կը կատարեն: Շոգենաւը քիչ ետքը կը սկսի շարունակել իր ընթացքը,  
և մենք կը պատրաստուինք զիշերք անցընել ի սրահին, ուր յանկեան ուրեք զե-  
տեղուած է ռուս սրբուհւոյ մը ոսկենկար պատկերը:

Մեր ենթադրութեանց հակառակ, — զի հարկ է համաձայնիլ թէ սովորա-  
կան և կարգաւորեալ ծառայութիւն մը չէ որով կը ճանապարհորդենք, — զի-  
շերք շատ հանգստեամբ անցուցինք: Միայն առաւօտեան ժամը երկուքին ար-  
թընցանք իրենց փիլաքս ուսող շիիզներուն ձայնէն, որոց ուսման ճանքն  
պահոց օրերն էին:

Ժամը երեքին պտտած միգին պտտառու, նաւապետը հրամայեց որ շոգե-  
նաւը առաջ չերթայ:

Գիշերուան միջոց գետին ջուրք շատ նուազեր էին: Օլը գեղեցիկ, արե-  
գակն ալ փառապանծ կը ծագի: Կենդանարար օդը կը սրէ մեր արտորակը, և  
հաճուիք նախաճաշին կ'ընենք: Սամալարը առանց բարեբու կը լսեցընէ մեզ  
իրեն ձայնը. ճանապարհորդ և նաւաստի, ամենքնիս ալ թէյ կը խմենք:

Նորաշէնի մեր ծանօթ պարոնայք ազնուամտութեամբ լիուլի հայթհայթեր  
զրեր էին ի շոգենաւին ամէն անասկ սպաշար, ընկեր ալ տալով զՄովսէս Սու-

քիտան , ձկնորսարանին երիտասարդ պաշտօնատար մը , որ ամենայն փափուկ մտադրութիւն ջրցուց առ մեզ :

Ճամբանուտ վրայ այլ և այլ աղքատին զիւղերու հանդիպելով , շոգենաւր կը կենայ Արաբ—Հաճի— Գառու՛միի դիմաց , որոյ բնակիչքն են Շամախիէն եկած սիւննիպ տաճիկ աղանդաւորք : Մէկէն ցամաք կ'ելլենք , կարգէ զուրս փափաք մը ունենալով մօտէն տեսնել այն գեղը , որ հազիւ կամ թերեւս ոչ երբէք օտարականաց այցելութիւն ընդունած է : Կ'ընկերէ մեզ նաւապետն , զի առանց իրեն՝ տեղւոյն բնակիչք և շունք անշուշտ մէկէն զմեզ պիտի հալածէին :

Հազիւ թէ քանի մի քայլ յառաջեր էինք զէպ իրենց տուները , ասպիէն անդիէն ցուրս կ'ելլեն խոռվեալ կերպարանօք անձինք , կամաց կամաց մերձենալով առ մեզ , ձեռուընին կարճ ու հաստ գաւազաններ , որով հազիւ կրնան զսպել իրենց անագին շները :

Հիւսէյին Պապա օղլու նաւապետը կը մօտենայ անոնց , քանի մի խօսքով կը բացատրէ մեր այցելութեան նպատակը : Առջի տխուր կերպարանքնին մէկէն կը փոխուի , և կը փութան առաջնորդել զիւզն որ քանի մի վայրկեան անպին է : Թէպէտ և նատղական կեանք ունին այս մահմէտականք , այլ ընդհանրապէս վրանաբնակք են , որով և քաղաքնին տարօրինակ տեսարան մը ունի . ամէն վրանի կամ բնակութեան քով ցիցերու վրայ շինուած հովանոց մը ունին ի մեծիսց պատասպարուելու համար :

Այդ կանանց ու տղայոց խմբին մէջ իջած կայծակի հարուած մը այնչափ անաբեկ պիտի չընէր զանոնք՝ որպէս մեր հոն անակնկալ երևնալը : Ամէնքն անապարեցին փախչիլ ծածկել զիրենք՝ մէկն այս կողմն , միւսն ուրիշ կողմ ի տունս և ի վրանս , փակելով ամէն մուտք :

Միծաղական էր անոնցմէ ոմանց երեսին վրայ տեսնուած զարմանք , որ կապերտնին հիւսելու դրաղած , զեռ չէին իմացած մեր հոն հասնելը , մինչ մենք անոնց բնակարանաց կիսաբաց մուտքէն զլուխնիս ներս կը խոթենք : Չգեղ իրենց բանն ու գործը , փութալ ծածկել իրենք զիրենք ամենէն մութ և անտես անկիւն մը՝ վայրկենի մը գործ եղաւ : Բայց առջի անաբեկութիւննին անցնելով , իրենց ամուսնաց քանի մը խօսքովը կրկին աշխատանքի կը դառնան առանց աշուրնին վեր վերցընելու : Իրենց համար կարծես թէ հետաքրքրական նիւթ մը չկայ . և ինձ այնպէս կը թուի թէ ամէն զգացումէ բռնագոյն է ի նոսա՝ իրենց տեսքը և ամուսնաց վախը : . . .

Բնակութիւննին՝ յետին աստիճանի աղքատին և վատտողջ , մտապրութեան արժանաւոր բան մը չունի : Արք հովուութեամբ կը պարապին , և տեսքք են բազմաթիւ արջառոց և հօտից խաշանց . իսկ կանայք կապերտ կը հիւսեն : Ուզեցինք քանի մը կտոր գնել , բայց պահանջած գներնին այնչափ բարձր էր , որ հարկադրեցանք հրաժարիլ :

Գառնալով ի շոգենաւ մեր , միւսանգամ կը սկսինք օտհիլ գառնալ կուրի վրայ :

Արեգակն կամաց կամաց ջերմութիւնն ալ աւելի զգալի ընելով մեզ , նա-

ւին տախտակամածին վրայ վրան մը կը քաշեն, ուր կը պատսպարուինք ի ճառագայթիցն, բայց գրկուելով նաև այն քիչ մը զովարար քամիէն զոր վրանը բոլորովին կը խափանէ :

Տախտակամածին վրայ երկնցած, կը նկատէի զՀիւսէյին նաւապետն՝ փայլեալ հինայիւ, որ բորիկ ոսքերը շարժելով, ձեռքի համարչին հատիկները կը դարձընէր, ամէն ջանքը բանեցընելով ի պաշտամանն : Մերթ համիչը ձգելով, սիկարէզ մը կը ծխէր ոնգային երգ մը երգելով . մերթ ալ երբ ցամաքին քովէն քերելով կ'անցնինք, և հոն իրենց ջրոյ սափորները լեցընելու համար եկող կանայք՝ կը նային առ մեզ, (չոգենաւո մը ներկայութիւնն իրենց համար սովորական դէպք մը չլլալով) : Խեղկասակը մէկէն մեքենային սուելը կը լսեցընէ, որոյ ձայնէն հետաքրքրիքն կը փութան ի փախուստ :

Կուրի ընդարձակ ու անվերջնայի դարձագարձներն կը կտրէ կ'անցնի շոգենաւը, և կը յառաջէ ընդ երկայթ՝ ի Հովէրատ և ի Մելիման : Որչափ սառլ երթանք, գետափունք աւելի բազմամարդ են, և տուները փոխանակ եղեգան, յարգախառն շագախով կամ տախտակօք շինուած են. ուռենի ծառոց տեղ ալ կաղամախիք : Տարմահաւք և ուրիշ թռչնոց խումբք անդադար գետին մէկ կողմէն միւսը կ'անցնին : Վերջապէս արեգակն կը ծածկուի ի հորիզոնին, երկրորդ գիշեր մ'է որ նաւուն մէջ պիտի անցընենք :

Առաւօտը կանուխ շոգենաւն Էրասիս ճէվատի դիմաց խարխիս կը ձգէ. բայց որովհետև դեռ ամէնքն ի քուն են, մենք ալ նոյնը կ'ընենք :

Յամաք ելած ատեննիս կ'անձրեւէ, և երկնից երեսը երեցած սպառնայիք դուշակել կու տան մեզ թէ գուարթ բնակավայր մը չէ մեզ համար, ուր արդեամբք ալ չի կար այլ ինչ հանդիսատեսիլ՝ բայց ի ձկնորսարանի վարչաց մարդու սիրութենէն, որոց քով հիւրընկալուեցանք : Կ'իմանանք թէ շահ ու սէրը միայն կրնայ բռնել զմարդիկ այսպիսի տեղ մը, ուր կլիմայն և ջերմ հիւանդութիւնք թունաւորիչք են մարդկային կենաց և էութեան :

Ամէն ջանքովնիս վայրկեան մի յառաջ այսպիսի տեղէ մը հեռանալու, կը զիջանինք մեր հիւրընկալուաց որ կը բռնապատեն գէթ օր մը քովերնին անցընել, մինչև սաստկահոս անձրևը դադարի :

## Դ

Ճեկատ . — Խասեռոշոյ Էրասիս և Կոշր գետոց : — Կլիմայ : — Զրկեահանք : — Մադրը հասնելնիս : — Մեկնումն յ'Էվրաք :

Ի ճէվատ կը լմըննայ մեր շոգենաւային ուղեւորութիւն. վասն զի անկէ անգին՝ Կուր յինքն ընդունելով զսասակընթաց և զբուռն Էրասիս, դժուարաւ նաւարկելի կ'ըլլայ ի պատճառս ծառոց և արմատոց և բռնութեան ընթացիցն : Ռըկու աշխարհագիր գաղղիացի՝ երկուորեակ եղբարց կը նմանցընէ զԿուր և զԷ-

բասի . և թէպէտ այս կրկին գետք՝ գրեթէ իրարու հաւասար երկայնութիւն , և նոյն ընդարձակութիւնն ունեցող լեռնագաղտերէ իրենց ջուրը կ'ընդունին , սակայն և այնպէս մինչ ի ճէվատ իրարմէ անկախ են : Բառաջագոյն , Ստրաբոնի ժամանակ , տարբեր էին նաև գետաբերանք : Երասխ՝ տասուիրեք անգամ աւելի սրնթեաց է քան զկուր . ջուրն պղտոր , մինչև հեռուն կուրի շրոց տեղատութեան առիթ :

Չկնորսութիւնն հոս այնչափ արգասաբեր չէ . մայիսի տասնընինգէն վերջ միայն կը սկսին աւելի շահ ընծայել : Քանի մը օրէն Նորաշինու գործաւորք հոս ի ճէվատ կը հասնին . և ձկանց որսոյն պարապող անձանց թիւը երեք հարիւրի կը հասնի : Հիմկու հիմայ կապոյտ (silure) ձկանց որսով կը զբաղին . իսկ ի մայիսի՝ օրը տասնընինգ , քսան հազար ձուկն կ'որսան : Ել'ըսեն թէ ընդ բովանդակ աշխարհ՝ ջրոց ուրիշ ընթացք մը չի կայ ուր այնչափ առատութեամբ ձկանց շարք ըլլայ որպէս ի կուր , և շատ ճշմարտանման է այս խօսքը :

Չերմախտ՝ որ մայիսի տասնընինգէն մինչև ի կէս սեպտեմբերի , քանի որ ցած են ջուրք , կը տիրէ գետին բովանդակ երկայնութեան վրայ՝ սաստիկ կերպով կը թռնանայ ի ճէվատ :

Չկնահանք ի ձախակողմեան ափունս կուրի հաստատուած են , ճիշդ հանդէպ տեղոյն ուր Երասխայ գետախառնունքն են . տափակ նաւակով մը երկու եղերքն իրարու միացած են , և բուն ճէվատ գիւղը գետին միւս կողմը կ'իյնայ :

Կ Մայիս . Անձրեւը դապրելով , նաւակով մը կ'անցնիինք ընդ գետն՝ ի ճէվատ շրջագայութիւն մը ընելու դիտմամբ .— բայց հազիւ ցամաքն սոք կը գնենք կէս մէջքովս կը խրիմ՝ դժնդակ աղմի մէջ :

Հաշտարար դատաւորին տանն առջև դիզուած են խուռն բազմութիւն մը դատախազից : Գրեթէ ամէնքն ձիաւորք են , և երիւարաց մէջ տասնէն ինը՝ նա յիկը , իրենց քուռակովը ընկերացած : Ստարչիւնայի տանն առջև հասնելով , որ տեղոյն գլխաւորն ըսել է , և յորմէ ամուսինս կը փափաքէր քանի մը տեղեկութիւններ առնուլ , ըսին թէ տունը չէ , և բռնադատուեցանք ետ դառնալ :

Իբրու գլխաւոր տեղ մը գաւառին , ճէվատ ունի պետական կառավարութեան տեղուանք , դիւան , բանտ , և այլն . բնակիչքն աւելի քան հինգ հարիւր . որոց մի մասն Ռուսաց զաղթականութիւն մ'է , և այլք ի Սալիանէ և ի Շամախոյ : Ռուսք եկեղեցի մը ունին ի ճէվատ , բայց առանց հաստատուն բնակութիւն սնեցող քահանայի : Գլխաւոր ւսօներուն , տարուան մէջ երկու երեք անգամ , Բոժիյ—Պրոմըյսէն կուգայ մէկը , եկեղեցական պաշտամունքն կատարելու և պսակները օրհնելու : Ուրիշ ատեն եկեղեցիին փակ կը մնայ , ու բանալին բընակչաց մէկուն յանձնուած է , որ ուղողին կը բանայ իրեն աղօթքը կատարելու համար : . . .

Ի գետախառնունս Երասխայ թեթև պղտի նաւակներ կը գտնուին՝ հաստ կաղամախեաց մէջ փորուած , 50—60 հարիւրորդամեղը լայնութեամբ ու իրեք չորս մեղրաչափ երկայն , զորս Գապք ձկնորսութեան համար կը գործածեն , երկերկու անձինք :

Բայց ժամանակն հասած է Կուր զետի անհիւրընկալ ավանց մեր հրածեղ-տի բարեւ տալու : Զբրմասխար հանգիստ չի թողուր զմեզ, և կը փութանք ես ու ամուսինս, մաքրագոյն օդ մը շնչել, մաքուր ջուր խմել ու առողջ հողի վըրայ կոխել : Հարկ է երթալ յԵւլլաք ուր բեռներնիս զրկած ենք արդէն :

Մեր աստիճականքը լաւ կառքի մը մէջ կը տեղաւորեն զմեզ, երեք ընտիր երիվարօք լծեալ, որք մեր վերջի ողջոյնները տալու ժամանակ՝ անհամբերք հողը կը կոխեն կը կոխկըռտեն տրոփելով ու ոտուընին վերցընելով : Հագիւ թէ կը բազմի՞նք ի կառն, և ահա կ'անհետանայ փոշեաց ամպերու մէջ : Այս ընթացից արագութեան միջոց դիմացնէս կ'անցնին Ռաէմլի և Զենկանահ զիւրօրէք Դադից : Ամէն տեղ կը ներկայանան մեզ բազմաթիւ հետք զիւրից որ անցեալ տարուան Կուր գետի ողողմանէն քարուքանդ եղած են :

Վերջապէս կը հասնինք ի կայարան Սադրի, ուր պիտի առնուք Էւլլաքի գնացքը : Անոր անցնելուն սպասած ատեննիս, շրջազայտութիւն մը կ'ընենք կայարանին շորս կողմը, որ յամենայնէ զուրկ է, նաև խմելու ջրէ : Հարիւր մեզր անդին՝ ճանճի մը եղեգնուող կը հետաքրքրեն զմեզ, ենթադրելով թէ հոն բնակութիւն պիտի դռնենք : Կամաց կամաց յառաջելով, շարժուն ցօղուններուն մէջէն կը նկատենք բաւական թուով կանայք և տղայք որ եկած են ճանճէն ջուր առնրու :

Տեսարանը որչափ զեղեցիկ՝ նոյն և անակնկալ է . վասն զի գնչուհիք են, որոց վրաններն երկու հարիւր մեզր հետու կ'երևնան : Իրենք ալ զմեզ կը տեսնեն, կարմրագեղատաք և պղնձէ սափուրդ ուսերնուն վրայ, պատրաստք ի փախուստ և աչքի ծայրով գեռ մեզի նայելով . . .

Կը փութանք ի կայարանն, և գնացքն առնելով կը հասնինք շուտով յԵւլլաք : Ճանապարհորդութեան մեր ամէն կարեւոր կահկարասին հոն է . բայց ինձ աւանդն աւելի հանդականն՝ մեր անկողնիկներն են : Անոնցմով ալ պիտի շրջագայի զանհանգուութելի կարծրութիւն տախտակէ մահճաց, և զբռնաբաս հարկ՝ առանց հանուելու շարաթներով քուն ըլլալու . զի անկողնոյ կազմածք՝ սակաւագիւտ են ի կայարանս կողմերուս, և պէտք է ըսել, նաև ի տունս Հայոց : Անկողնին, ինչ որ ի Գաղղիա կը հասկընանք, անծանօթ է այս ժողովրդոց, որ յայսմ բուրոսիին ասիականք են . . . Մեծ բարակութեան կամ Եւրոպա տեսած ըլլալու նշան է՝ Հայոց գլխաւոր և մեծ տուներու մէջ անկողնոյ օրինաւոր կազմածի մը հանդիպիլը . և այս ալ յաճախ՝ բարեկամաց համար սահմանուած սեւ նեկի յատուկ է : Բազուէ ելլելէս ի վեր՝ գիշեր մը անկողնոյ մէջ չէի հանգաձ . հարկ չէ ըսել թէ ո՛րչափ պէտք կ'իմանայի : Դեղարաննիս, արդուզարգի կարեւորքն՝ բուրդ հետերնիս են, ալ ասկէ ետքը իբրու ճիշդ սիրաբացիք պիտի ճանապարհորդենք :

Հանգիստ գիշեր մը անցընելով ի կայարանին, բեռներնիս կը ժողվենք, և Գաղղիա կը դրկենք մեր առաջին ստացածները և բնական պատմութեան հաւաքմունք մը, յորում ընտիր գասակարգ մը Կուր և Երասիս գետերու ձկանց :

Իսկ հիմա կը գարձընեմ աչուրներս ի հոծն Ղարապաղ, ուր պիտի ճանապարհ-

հորդեմք Շուշի քաղաքէն սկսելով: Այս նպատակաւ քառանիւ փայեթոն մը վար-  
 ձեցինք մեզ համար, գրոհքա մ'ալ թեթե բեռները կրելու. որովհետե ծանրը՝  
 վրաններ, հարկաւոր պաշար, ձիոց կազմած, լուսագրականք, բեռնակառօք յա-  
 սաշագոյն գրկած էինք: Փայեթոնը, գերազանց կառք մը, շիտակ պիտի տանի  
 զմեզ ի Շուշի, ուր գրոհքան թղթատարութեանց անազանումներու կ'ենթարկուի:

Գեղեցիկ է օդը. երկնքին երեսը ամպ մը չի կայ. ու կապուտակ և մաքուր  
 հորիզոնին վրայ մէկ կողմանէ կը բարձրանան ձեամբ սպիտակափառ լեռինք  
 Տաղրատանի՝ նոր բարձրանալու սկսած արևուն ճառագայթից տակ. այնպէս  
 մաքուր և որոշ՝ որ պարզ աչքով կարելի է նկատել, նաև հեռուն, լեռանց ա-  
 մէն տառիմանեալ կտորուանքը, զի մշուշի թեթե հետք մ'ալ չի կայ: Հրաշագեղ  
 տեսարան մ'է, և մեր Ալպեայց ընծայած տեսարանին հաւասար՝ արժանաւոր  
 հիացման:

Միւս կողմանէ՝ Գարապաղի լեռինք ալ կը մրցին սպիտակութեամբ և գեղով՝  
 Տաղրատանի լեռանց հետ: Գէպ ի հոն կ'ուզղենք մեր ընթացքը. «Մարգս  
 պէտք է որ երթայ առ լեռանն, որովհետե ինք չէ կարող գալ առ մեզ» կ'ըսէ  
 Հայոց ժողովրդական առածը: \* Այս գաղափարը զիս շատ կը զմայլեցունէ, և  
 կը փութամ գործապրել:

Շարայարեղի

## ԱՐԻՍՏՈՏԷԼ ԵՒ ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐ

### ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ԱՌԹԻԻ

**Ա**ՅՆ ճշմարիտ և պատմական յարաբերութեանց վրայ որ ու-  
 նեցան ընդ իրեարս Արիստոտէլ և Մեծն Աղեքսանդր, այսինքն  
 հին իմաստասիրաց գերագունին աւանդած դաստիարակութեանն  
 և ուսմանն առ ամենահօրն յիշխանս՝ զբաղեցան ընդհանուր կեր-  
 պով իրենց գրուածոց մէջ Սէնդ-Քրուա, Տրոյսըն և Շղահր. իսկ  
 մասնաւոր հրատարակութեամբք՝ Ծեղլ, Հէկէլ, որդի իմաստասի-  
 րին, և աւելի ընդարձակ և հմուտ կերպով կէկէր:

Սակայն այս վերջինս ալ իւր նախընթացներուն նման՝ տեղ տեղ  
 չափազանցեց Արիստոտելի դասախօսութեանց ըրած ազգեցու-  
 թիւնն՝ իւր աշակերտին մտաց և գործոց նկատմամբ. վասն զի